

են, իսկ շատերն էլ սարեր-ձորերն են փախչում, անանց անտառներն ընկնում, օրերով քաղցած, սարսափած, գաղտագողի ճանապարհ կրտրում հետզհետե գէպի Կարադէրէ, Սիւրմէնէ, Տրապիզօնի մօտերքը և ճանիկի կողմերը (Սամսօն), իսկ մի փոքր մասն էլ անցնում է Բաբերդ, հետզհետե, տարիների ընթացքում՝ մահմէդական հալածանքներից նեղուելով, Կարադէրէ, Սիւրմէնէ և Բիզէ փախած հայերը քիչ-քիչ խմբւում են գլխաւորապէս Տրապիզօնի մօտականերում և ճանիկի կողմերում (Սամսօնի սանջակ): Իսկ այս վերջին վիճակից էլ մի փոքր հատուած գնում հաստատուում է Սինօպի վիճակում:

Այնուհետև երկար տարիներ մնում են նրանք այդ տեղերում, մինչև որ վերջապէս իրանց սոսկալի կացութիւնից վերջին ծայր յուսահատուած, դիմում են օտար ափերը: Վերջին պատերազմից յետոյ՝ Կովկասեան ափերը գաղթելու հետ միաժամանակ մի քանի տասնեակ տուն նրանցից, Տրապիզօնի և Օրդուի կողմերից, գնում նստում են Բրուսայի կողմերը, հեռաւոր Նիկօմիդիայի գաւառը, ուր մնում են նրանք մինչև այսօր:

Այսպիսով մեր Կովկասեան ափերի և նրանց մօտիկ տեղերում ապրող թիւրքահայերը համշէնցիներ են, համարեա բացառապէս Տրապիզօնի վիլայէթից, Տրապիզօնի և ճանիկի կողմերից եկած. նրանց մի շատ աննշան մասն է միայն, մի քանի տասնեակ տուն, Սինօպի վիճակից գաղթած:

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ:

Համշէնցիները համախմբուած մեծ գիւղեր չունին. նրանց գիւղերը սովորաբար կազմուած են լինում մի քանի իրարից հեռու ընկած տների խմբերից կամ հատ-հատ տներից: Տների ամենամեծ խմբեր, որ կարելի է տեսնել նրանց մէջ, հազիւ 20-30 տուն կունենան: Նրանց մեծ գիւղերը սովորաբար մի քանի այգալիսի խմբերից կամ գիւղամասերից են բաղկացած, որոնք ջուկ-ջուկ, ժողովրդական անուն են կրում, սովորաբար թիւրքերէն և կամ թէ չէ խմբերում ապրող հարուստ, «իշխան» ու առաջաւոր մարդկանց անուններով են լիշւում. օրինակ՝ «Փափագցոց գեղ», «Սնապցոց գեղ», «Արթին ուստի գեղ», «Սիւնգիւրդցոց գեղ» և այլն: Երբեմն գիւղի մի ծայրից մինչև միւսը ժամերով ճանապարհ է քաշում. այնքան հեռու են լի-

նում թաղերը իրարից: Դրա պատճառը գլխավորապես երկրի տեղագրական պայմաններն են. հարթ, ընկած մեծ տարածութիւններ շատ քիչ են պատահում Սև ծովի ափերին, ծովից մի տասնեակ վերստ հեռու, որտեղ որ հայ գիւղերն են շինուած. սովորաբար բոլորը թեք ու խորդուբորդ զառելայրեր են, ձորերով կտրտուած: Բացի երկրի դիրքից, մասամբ էլ իրանց երկրագործական պարապմունքն է պատճառը: Տեխնիկական մի քանի բոյսերի մշակութիւնն ընդհանրապես շատ աւելի խնամք ու հոգացողութիւն է պահանջում, քան սովորական հացաբոյսերը: Այսպէս օրինակ անկարելի բան է տնից հեռու վերստերով հեռու թութութուն մշակել. պէտք է վերստերով հեռու տեղից տակառներով ջուր հասցնել տնկելու ժամանակ, քաղածը սալներով տուն բերել և այլն: Պեռ հիմա, երբ թութութունի պլանտացիաները տներին մօտիկ են, ջրելն ու քաղածը կրելը ահագին նեղութիւն են պատճառում երկրագործին, ինչ կը լինի, եթէ վերստերով հեռու լինին: Այդ է պատճառը, որ նաստիպուած է իր կացարանը մօտեցնել աւելի իր արտին, քան հարեւանին: Այս էլ կայ, որ համշէնցին ամեն տեղ տուն չի շինիլ. պէտք է ջուրն էլ մօտիկ լինի: Զուրը ահագին դեր է կատարում նրա տնտեսական կեանքում. տանը խմելու, կերակրի, լողանալու համար—ջուր պէտք է բերուի, մալերին պէտք է ջուրը տանել, իսկ ձմեռը, խորը ձնին, երբեմն էլ տանը պէտք է խմեցնել. թութութունի և «ածուքի» ցանած հնդերն ու «ֆիդաները» պէտք է ջրել և այլն: Հեռու տեղից ինչպէս պէտք է այնքան ջուր բերուի, մանաւանդ որ նրանք սովորութիւն չունին տան համար ձիով կա՞ն էշով ջուր կրելու. միայն թութութունի «ֆիդան» ջրելու և տնկելու ժամանակն են տակառներով ջուր կրում. իսկ սովորաբար տանը բանեցնելու ջուրը կրելը կանանց պարտքն է. նրանք են շալակով ջուրը բերում փայտէ ամաններով («գուֆա» թ.): Վերջապէս տունը պէտք է անպատճառ «ածուքտեղ» ունենայ: Անկարելի բան է երեւակայել մի համշէնցի հայի տուն, որ մօտը, իրան կից «ածուք» չունենայ: Բացի «ածուքից», պէտք է իր շէնքերը շինելու համար տեղ ունենայ տան մօտիկ, աւելի թութութունի հա-

մար, որը չորացնելու և պահելու համար շինուած շէնքերն ու պահեստները ահագին, հարիւրաւոր սաժէններով տեղ են բռնում:

Եւ պէտք է նկատել, որ առհասարակ նրանք՝ գոնէ այստեղ, Կովկասեան ափերում, թութունի համար աւելի լաւ շէնքեր ու յարմարութիւններ ունին, քան սեփական իրանց համար: Նրանցից շատերի թութունի պահեստները—«մաղաղաները»—իրանց տներից դեղեցիկ են և ցրտից ու խոնաւութիւնից շատ աւելի պաշտպանուած, քան իրանց տները: Այդ պահեստները սովորաբար տախտակաշէն են լինում, մինչդեռ իրանց տները ծուռումուռ, կլոր փայտից են շինուած, անտաշ ու ծակ-ծակ արաներով:

Խօսելով Կովկասեան ափերի կլիմայական պայմանների մասին, չի կարելի ասել, թէ հայերի բոլոր նստած տեղերը վատ են: Ոչ, այստեղ էլ են պաստահում լեռնային ու հովասուն գեղեցիկ տեղեր, ուր ոչ միայն ջերմը քիչ է լինում, այլ և լեռնային, մաքուր ու առողջարար կլիմա ունին. ինչպէս օրինակ՝ Սուխումի շրջանում Ծէբէլդա, Չէրնօմօրի վիճակում՝ Ղօյթա և այլն: Բայց ընդհանրապէս ասելով, հայ գիւղերից շատերի դիրքը առողջապահական կողմից լաւ պայմանների մէջ չէ: Տեղ-տեղ համարեա ծովին հաւասար, ձորերում ու նեղ հովիտներում ցրուած, անտառների մէջ կորած. տեղ-տեղ էլ անտառապատ բլուրների ու լեռների լանջին, ծովից մօտաւորապէս մի $\frac{1}{4}$ վերտտ կամ քիչ էլ աւելի բարձր և սովորաբար ծովահայեաց, համարեա բոլորն էլ ծովին են մտիկ տալիս:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ:

Մեզ մօտ, Կովկասում, համշէնցի հայերը նստած են գլխաւորապէս Սև ծովի Կովկասեան ափերում և մասամբ էլ նրանց մօտիկ տեղերում՝ Աուբանի վիճակում, Եկատէրինօգարի ու Մաչկօպի շրջակայքում և Խրիմի ափերում: Նրանց ամենամեծ բազմութիւնը, ինչպէս վերևն էլ ասեցի, կենտրոնացած է այսօր Սուխումի շրջանում, ուր նրանց թիւը հասնում է մօտ 900 տան և մի հազարի չափ էլ, մէն-